

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Վահան Հովհաննիսյանի, Ադվան Վարդանյանի և Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-201-01.02.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

1. Ներկայացված օրենքի նախագծի ընդունումը ենթադրում է ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեության մասով հարկային բեռի էական նվազեցում, ինչն ընդունելի չէ՝ հետևյալ հիմնավորումներով.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ուսումնասիրություններ են կատարվել Երևան քաղաքում գործունեություն

ծավալող 30 ատամնաբուժական ծառայություններ մատուցող անձանց մոտ՝ վերջիններիս գործունեության փաստացի պատկերը վերհանելու նկատառումներով:

Գործունեության հիմնական միջինացված բնութագրիչներն են եղել՝

բազկաթոռների թիվը՝ 6,

բժիշկ-ստոմատոլոգների թիվը՝ 9,

բուժքույրերի թիվը՝ 2,

վարչական աշխատողների թիվը՝ 2,

ատամնատեխնիկների թիվը՝ 2:

Ուսումնասիրված բոլոր ընկերություններում շահութաբերության մակարդակը կազմել է 2-7 տոկոս, իսկ աշխատավարձը՝ 37-72 հազ. դրամ:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ ատամնաբուժական ծառայություններ մատուցող անձինք հիմնականում գործունեություն են ծավալում հետևյալ երկու եղանակով՝

1-ին եղանակ.

Ատամնաբուժական կլինիկայի կազմակերպիչը բժիշկ-ստոմատոլոգների հետ աշխատում է օրավարձով՝ յուրաքանչյուր բժիշկ-ստոմատոլոգից ստանալով օրական 15-20 հազ. դրամ եկամուտ՝ փոխարենը կրելով գործունեության արդյունքում առաջացող հարկերի և կոմունալ ծախսերի վճարման պարտավորությունը: Այսինքն, ատամնաբուժական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը կրում է բժիշկ-ստոմատոլոգը:

Փոխարենը, կլինիկայի կազմակերպիչների կողմից իրենց գործունեության արդյունքում պետությանը վճարված շահութահարկը մեկ բազկաթոռի համար կազմել է ամսական 3,5-9 հազ. դրամ կամ, որ նույնն է, օրական 130-350 դրամ: Եթե անգամ ընդունենք, որ մեկ բազկաթոռը շահագործվել է ոչ ավելի, քան մեկ բժիշկ-ստոմատոլոգի կողմից, ապա ստաց-

վում է, որ մեկ ստոմատոլոգի հաշվով միջինը 17,5 հազ. դրամ վարձատրություն ստանալու դիմաց կազմակերպիչը վճարել է օրական 240 դրամ շահութահարկ կամ ստացած եկամուտների 1,37 տոկոսը:

Ակնհայտ է, որ եթե ատամնաբուժական գործունեություն իրականացնող անձինք նախորդ հարկման դաշտի պայմաններում հայտարարագրեին իրենց իրացման շրջանառությունների իրական մեծությունները, ապա վճարվող շահութահարկի չափը շատ ավելին կլիներ, քան անգամ ներկայումս մեկ բազկաթոռի հաշվով վճարվող արտոնագրային վճարի առավելագույն՝ 80 հազ. դրամը:

2-րդ եղանակ.

Ատամնաբուժական կլինիկայի կազմակերպիչը բժիշկ-ստոմատոլոգների հետ աշխատում է ատամնաբուժական բազկաթոռների վարձակալության հիմունքներով՝ յուրաքանչյուր բազկաթոռի վարձը սահմանելով ամսական 200-350 հազ. դրամ՝ փոխարենը կրելով միայն կոմունալ ծախսերի վճարման պարտավորությունը: Այս դեպքում ատամնաբուժական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, ինչպես նաև այդ գործունեության արդյունքում առաջացող հարկերի վճարման պարտավորությունը կրում է վարձակալը:

Այս եղանակով աշխատող ատամնաբուժական կլինիկաները մեկ բազկաթոռի հաշվով միջին ամսական 275 հազ. դրամ վարձատրության դիմաց վճարել են միջինը 4,2 հազ. դրամ շահութահարկ, կամ այլ կերպ՝ 1 բազկաթոռի հաշվով պետությանը վճարված հարկերը շուրջ 65 անգամ պակաս են եղել 1 բազկաթոռի վարձակալության վճարից:

2. Օրենքի նախագծով առաջարկվում է մանկական ատամնաբուժական գործունեության մասով սահմանել արտոնագրային վճարի մեծությունը կիսով չափ նվազեցնող գործակից: Նման մոտեցումը համարում ենք ոչ ընդունելի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում որևէ օրենսդրական արգելք կամ սահմանափակում չկա, որի կիրառությունը

կարող էր երաշխավորել, որ տվյալ մանկական ատամնաբուժական կլինիկայում ատամնաբուժական ծառայություններ են մատուցվում բացառապես մանկահասակներին: Հետևաբար, առաջարկության ընդունման պարագայում կստեղծվեն հարկումից խուսափելու մեծ ռիսկեր, իսկ դրանց կառավարման ուղղությամբ արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը գրեթե անհնարին կլինի:

3. Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ ատամնաբուժական գործունեության մասով արտոնագրային վճարը հաշվարկվում է ոչ թե բազկաթոռների թվի, այլ ատամնաբույժների թվի հիման վրա, ինչը նույնպես ընդունելի չէ՝ հետևյալ նկատառումներով՝

1) առաջարկության ընդունումը կհանգեցնի հարկային բեռի ոչ արդարացի վերաբաշխումների՝ բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, միննույն ատամնաբուժական կլինիկայում բժիշկ-ստոմատոլոգը միննույն ատամնաբուժական բազկաթոռի վրա աշխատում է ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մեկ այլ բժիշկ-ստոմատոլոգ աշխատանքային օրվա ընթացքում աշխատում է ընդամենը մի քանի ժամ և բազկաթոռը տրամադրում է հաջորդ հերթավորի բժիշկ-ստոմատոլոգին (արդյունքում ստացվում է, որ երկրորդ բժիշկ-ստոմատոլոգը, որն այլ հավասար պայմաններում 2-3 անգամ ավելի քիչ աշխատանք է կատարում և ավելի քիչ եկամուտ է ստեղծում, պետք է վճարի նույնքան արտոնագրային վճար, որքան՝ առաջին բժիշկ-ստոմատոլոգը):

2) առաջարկության ընդունումն անհարկի կբարդացնի հարկային վարչարարությունը՝ հաշվի առնելով այն, որ ատամնաբուժական բազկաթոռների թիվն ավելի ակնառու և ավելի հեշտ վերահսկելի ելակետային տվյալ է, քան բժիշկ-ստոմատոլոգների թիվը:

Միաժամանակ, հատկանշական է այն, որ հարկման այլընտրանքային համակարգերի, այդ թվում՝ արտոնագրային վճարների համակարգի կիրառությունը ենթադրում է պարզ հարկային վարչարարություն և հարկ վճարողների ու հարկային մարմինների

միջև նվազագույն շփումներ: Հետևաբար, առաջարկության ընդունումն ինքնին չի բխում նաև արտոնագրային վճարների համակարգի կիրառության հիմքում դրված հիմնական սկզբունքներից:

4. Ինչ վերաբերում է ատամնատեխնիկական ու ռենտգենաբանական ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների հարկմանը, ապա հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն իսկ ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ՝ լուծելու համար ծառայությունների նշված տեսակներից ստացվող եկամուտների հարկման համակարգում նկատված խնդիրները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 27-ի՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշման կիրառման ընթացքում ծագած որոշ հարցերի վերաբերյալ» N 4 պաշտոնական պարզաբանմամբ պարզաբանվել է, որ՝

ա. ստոմատոլոգիական ծառայությունների ընթացքում մատուցված ռենտգենաբանական ծառայությունները ներառվում են ստոմատոլոգիական ծառայությունների մեջ,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից ռենտգենաբանական ծառայությունները մատուցված են համարվում այն դեպքում, եթե դրանք իրականացվում են նույն կազմակերպությունում՝ առանց ստոմատոլոգիական ծառայությունների մատուցման.

2) «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 25-Ն հրամանի կիրառման ընթացքում ծագած որոշ հարցերի վերաբերյալ» N 5 պաշտոնական պարզաբանմամբ պարզաբանվել է, որ՝

ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման ընթացքում ատամնատեխնիկի 1 հիմնական աշխատատեղ կարող է համարվել 1 ատամնատեխնիկի և գիպսային մոդելների ստացման, զոդման, պոլիմերացման, փայլեցման, ձուլման աշխատանքներ

կատարող՝ մինչև 2 օժանդակ (տեխնիկական) աշխատողների աշխատատեղերի ամբողջությունը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի նշված պարզաբանումներն արդեն իսկ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման և սահմանված կարգով հրապարակման համար:

5. Միաժամանակ, հայտնում ենք, որ հստակեցման կարիք ունի օրենքի նախագծում օգտագործված «ինպլանտոլոգ» հասկացությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինպլանտոլոգիայով կարող է զբաղվել համապատասխան վերապատրաստման դասընթացներ անցած յուրաքանչյուր ատամնաբույժ:

6. Բացի դրանից, օրենքի նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Մասնավորապես՝

1) օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «ՀՕ-Ն 209 օրենքի» բառերը փոխարինել «ՀՕ-209-Ն օրենքի» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի պահանջները.

2) օրենքի նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր հոդվածների դրույթները վերաբերում են օրենքի 8-րդ հավելվածին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առաջարկվող նախագծով նախատեսվում է ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեության արտոնագրային վճարների հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալները, այն է՝ ատամնաբուժական ծառայությունների մատուցման համար նախատեսված բազկաթոռների թիվը և ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման աշխատատեղերի թիվը համապատասխանաբար փոխարինել ատամնաբույժերի և ատամնատեխնիկների թվով:

ՀՀ կառավարության 01.02.2007թ. №201-Ն որոշման №1 հավելվածի 2-րդ կետի գ) ենթակետով ատամնաբուժական բուժկանխարգելիչ կազմակերպություններում (բաժանմունքներում, կաբինետներում) աշխատող ատամնաբույժների, բուժակների և տեխնիկ-ատամնաբույժների համար շաբաթական սահմանված է 33 ժամ տևողությամբ աշխատաժամանակ: Այս հանգամանքից ելնելով, ատամնաբուժական կազմակերպություններում սահմանվում են աշխատանքի 2-3 հերթափոխ: Այսինքն, մեկ ատամնաբուժական բազկաթոռը շահագործվում է 2-3 ատամնաբույժների կողմից: Ուստի, անգամ նախագծով առաջարկվող նվազեցված արտոնագրային վճարի դրույքաչափերի պայմաններում, վճարման ենթակա արտոնագրային վճարի գումարը լավագույն դեպքում կմնա անփոփոխ, իսկ վատագույն դեպքում՝ կաճի, այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով: Մասնավորապես, անխուսափելիորեն կաճեն ստոմատոլոգիական ծառայությունների գները, ինչը կնվազեցնի այցելությունների թիվը: Ատամնաբույժի ծառայությանը կդիմեն միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իսկ պրոֆիլակտիկ այցելությունները կվերանան, ինչը բացասաբար կազդի բնակչության հիվանդությունների կանխարգելման վրա:

Հարկային բեռի ավելացումը կստիպի ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների ինքնարժեքի իջեցման նպատակով կիրառել ավելի էժան դեղամիջոցներ, պարագաներ և տեխնոլոգիաներ, ինչի հետևանքով կիջնի բնակչությանը մատուցվող բուժօգնության և սպասարկման որակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և պասարկման շրջանակներում մատուցվող ստոմատոլոգիական ծառայությունների փոխհատուցման գները 4-6 անգամ ցածր են նույն ծառայությունների շուկայական գներից, բարդություններ կառաջանան պետական պատվերի տեղադրման գործընթացում, ինչի հետևանքով կկրճատվեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և պասարկման ծավալները:

Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվող արտոնագրային վճարի չափի հաշվարկման գործակիցները չեն արտահայտում ուսումնական պրոցեսում ընդգրկված ստոմատոլոգիական համասարքերի գործունեության առանձնահատկությունները: Բարձր է նաև մանկական ստոմատոլոգիական ծառայության արտոնագրային վճարի համար սահմանվող 0,5 գործակիցը, որն անհրաժեշտ է նվազեցնել կամ զրոյացնել:

Ելնելով վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ նախագծի ընդունումը բացասական ազդեցություն կունենա ոլորտի վրա վերջինիս զարգացման և գործունեության ընդլայնման տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է *ոչ զգալի դրական* ազդեցություն:

Չնայած այն հանգամանքին, որ Նախագծով առաջարկվում է ատամնաբուժական գործունեության համար արտոնագրային վճարի հաշվարկման հիմք սահմանել ատամնաբույժների թվաքանակը, դեռևս հստակ չէ, թե ատամնաբուժական ոլորտում մասնագիտական գործունեության համար արտոնագրային վճարի չափի հաշվարկման տարբերակված գործակիցների կիրառման վերահսկման ինչ մեխանիզմ է նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման նպատակն է կանխել ատամնաբուժական ծառայությունների ոլորտում առկա բացասական դրսևորումները մասնավորապես՝ կիրառել հարկման առանձնահատկությունների գործադրում՝ ըստ մասնագիտական ծառայությունների՝ ազատելով հարկից երիտասարդ-ուսանող մասնագետներին:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են ատամնաբուժական և ատամնատեխնիկական ծառայությունների շուկաների հետ:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Արտոնագրային վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Արտոնագրային վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է՝

ա) նվազեցնել ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեության մասով արտոնագրային վճարի դրույքաչափերը, իսկ արտոնագրային վճարների հաշվարկման համար ելակետային տվյալ սահմանել համապատասխանաբար՝ ատամնաբույժերի և ատամնատեխնիկների թիվը,

բ) ատամնաբուժական ոլորտում որոշակի մասնագիտական գործունեության տեսակների համար սահմանել լրացուցիչ գործակիցներ,

գ) կլինիկական օրդինատորների և բժիշկ-ինտերների կողմից մատուցվող ատամնաբուժական ծառայություններն ազատել արտոնագրային վճարից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա կունենա բացասական, իսկ ծախսերի վրա՝ չեզոք ազդեցություն:

Պ-201-01.02.2013-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-Ն 209 օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 8 հավելվածի 9-րդ կետի աղյուսակում՝

1) ատամնաբուժական գործունեություն տողում՝

ա) «բազկաթոռ մինչև երեքը ներառյալ» բառերը փոխարինել «ատամնաբույժ» բառով,

բ) «յուրաքանչյուր բազկաթոռի համար» բառերը փոխարինել «յուրաքանչյուր ատամնաբույժի հաշվով» բառերով,

գ) «80000», «57000», «57000», «28500», «14000» թվերը համապատասխանաբար փոխարինել «30000», «21300», «21300», «10700», «5300» թվերով.

2) ատամնատեխնիկական գործունեություն տողում՝

ա) «աշխատատեղ մինչև երեքը ներառյալ» բառերը փոխարինել «ատամնատեխնիկ» բառով,

բ) «յուրաքանչյուր աշխատատեղի համար» բառերը փոխարինել «յուրաքանչյուր ատամնատեխնիկի հաշվով» բառերով,

գ) «80000», «57000», «57000», «28500», «14000» թվերը համապատասխանաբար փոխարինել «30000», «21300», «21300», «10700», «5300» թվերով.

3) հանել «ատամնաբուժական գործունեություն» եւ «ատամնատեխնիկական գործունեություն» տողերին հաջորդող տողերը:

Հոդված 2. Օրենքի N 8 հավելվածի 13-րդ կետում՝

ա) 11-րդ ենթակետում «ատամնաբուժական ծառայությունների մատացման համար նախատեսված բազկաթոռների թիվը» բառերը փոխարինել «ատամնաբույժների թիվը, բացառությամբ կլինիկական օրդինատորների եւ բժիշկ-ինտերների» բառերով.

բ) 12-րդ ենթակետում «ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման աշխատատեղերի» բառերը փոխարինել «ատամնատեխնիկների» բառով:

Հոդված 3. Օրենքի N 8 հավելվածի 14-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3.2 ենթակետով.

«3.2 Ատամնաբուժական ոլորտում մասնագիտական գործունեության համար՝

մանկական ստոմատոլոգի համար՝ 0.5

թերապեւտիկ ստոմատոլոգի, վիրաբուժական ստոմատոլոգի եւ օրթոդոնտի համար՝ 1

օրթոպեդիկ ստոմատոլոգի համար՝ 1.2

ընդհանուր ստոմատոլոգի (առանց իմպլանտոլոգիայի) համար՝ 1.3

իմպլանտոլոգի համար՝ 1.5.»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

Օրինագծի նպատակն է կանխել 2012թ. դեկտեմբերի 19-ին ընդունված «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների եւ լրացումների բացասական դրսեւորումները ստոմատոլոգիական ծառայությունների ոլորտում: Փոփոխությունների ուղղակի բացասական ազդեցությունը կարող է արտահայտվել ոլորտում զբաղված շուրջ 36.000 մարդկանց զգալի մասի աշխատատեղերի փակմամբ: Անուղղակի բացասական ազդեցությունը կդրսեւորվի դենտալ տուրիզմի ծավալների կրճատմամբ, ստոմատալոգիական ծառայությունների ոլորտում գների կտրուկ աճով, հնարավոր հաճախորդների թվի նվազման հետ կապված բյուջետային մուտքերի կրճատմամբ:

Մյուս կողմից կարելու է, որ արտոնագրային վճարների համար հիմք հանդիսանա ոչ թե բազկաթոռների կամ աշխատանքային սեղանների քանակը, այլ բժիշկ-մասնագետների ու ատամնատեխնիկների թիվը:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով մինչեւ երեք բազկաթոռ եւ մինչեւ երեք աշխատատեղ ունեցող ատամնաբուժական եւ ատամնատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար սահմանվել է ավելի բարձր արտոնագրային վճարների դրույքաչափ քան երեքից ավել բազկաթոռ եւ աշխատատեղ ունեցող կլինիկաների համար: Նշված հանգամանքը խոչընդոտում է ՓՄՁ-ների զարգացմանը, մեծացնում է դրանց գործունեության դադարեցման ռիսկերը եւ առավել շահավետ է դարձնում խոշոր տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:

Հարկման արդարության, ոլորտի հետագա զարգացման, բնակչության ստոմատոլոգիական առողջության պահպանման ապահովման, ինչպես նաեւ ՓՄՁ-ների գործունեության եւ զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով նախագծով առաջարկվում է վերացնել նշված տարանջատումը, կիրառել հարկման առանձնահատկությունների գործադրում՝ ըստ մասնագիտական ծառայությունների՝ ազատելով հարկից երիտասարդ-ուսանող մասնագետներին:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին